



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Նորին Սրբութեան մակազրութեամբ պատուիրուեց
ս. Էջմիածնի Սինօզին հետեւել և ստանալ այն գումարը,
որ պ. Սարգիս Բէզջանեանը կտակել է ս. Էջմիածնի վան-
քին, Մայր Աթոռի Կէորդեան Հոգևոր ձեմարանին և Ղա-
րաքիլիսայի հայոց եկեղեցական-ծխական դպրոցին: Մա-
կազրութեան հետ ուղարկուեց Բէզջանեանի կտակի պատ-
ճէնը: 9 դեկտեմբերի, թ. 2005:

Նորին Սրբութեան կողմից յայտնուեց Երևանի տ.
նահանգապետին ի գիտութիւն, որ Տ. Ներսէս վարդապետ
Տէր-Միքայէլեանի փոխարէն Մայր Աթոռի «Արարատ»
ամսագրի պատասխանատու խմբագիր կարգուեց Տ. Բարդէն
վարդապետը: 9 դեկտեմբերի, թ. 2007:

Դիւանի գրութեամբ յայտնուեց Մայր Աթոռի միա-
բան Տ. Ներսէս վարդապետ Տէր-Միքայէլեանին, որ իւր
զբաւոր խնդրի համաձայն, արձակուած է Մայր Աթոռի
«Արարատ» ամսագրի խմբագրի պաշտօնից: 9 դեկտեմբերի
թ. 2016:

Կոնդակ Սինօզի անդամ Տ. Բարգէն վարդապետի անունով, որով կարգուեց Մայր Աթոռի պաշտօնական «Արարատ» ամսագրի պատասխանատու խմբագիր և նախագահ խմբագրական ժողովի, անդամակցութեամբ պ. պ. Գէորգ Ալթունեանի և Գուրգէն Էղիլեանի: 9 դեկտեմբերի, Թ. 2019:

Կոնդակ Շամախու թեմի Բաշլիան զիւղի ծխական Հոգարարձութեան անունով, որով օրհնելով Հոգարարձութեան և զիւղի ամբողջ ժողովրդին՝ թոյլ տրուեց բանալ տեղի եկեղեցու բակում եկեղեցական-ծխական կենդրոնական զպրօց, որի տարեկան ծախքը հոգալու է պ. Աւագ Սարգսեան Մսերխանեանը: 9 դեկտեմբերի, Թ. 2020:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան վերոյիշեալ պ. Աւագ Սարգսեան Մսերխանեանցի անունով, որ տարեկան 500-ական ռուբլի նպաստ է տալիս Շամախու թեմի Բաշլիան զիւղի «Ծխական կենդրոնական Մսերխանեան» զպրօցին, իսկ առաջիկայ 1914 թ. զարնան իւր ծախքով նոյն զպրօցի համար սեպհական շէնք է կառուցանելու: 9 դեկտեմբերի, Թ. 2023:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. ԼՂմիածնի Սինօզին կարգադրել պահանջել Գարսում գտնուած հանգուցեալ բժշկապետ Աղէքսանդր Տէր-Յարութիւնեանցի տան նորոգութեան վրայ ծախսած գրամներ չաշիւք և կանոնադրապէս ստուգելուց յետոյ թոյլ տալ վճարել քաղաքային հարկերը: 10 դեկտեմբ., Թ. 2027:

Նորին Սրբութեան մակագրութեամբ ուղարկուեց ս. Էջմիածնի Սինօզին երզուեալ հաւատարմատար պ. Տիգրան Յովհաննիսեանի նուիրաբերած 100 օրինակ ռուսերէնից իւր թարգմանած «Յարութիւն» վէպը, պատուիրելով վաճառել տալ Մայր Աթոռի տպարանի միջոցով և գոյացած արդիւնքը յատկացնել յօգուտ զպրօցական ֆօնդի: 10 դեկտեմբերի, Թ. 2028:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Երեանի Հայոց

ժողով-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսին առաջադրել կազմողների գործակալ Տ. Մկրտիչ քահանային, որ ուղարկել Մայր Աթոռի մատենադարան նոյն աւանի եկեղեցում գտնուած թուով 7 ձեռագիր մատեանները: 10 ղեկտեմբերի, թ. 2033:

Դիւանի գրութեամբ յայտնուեց Մայր Աթոռի տպարանի վարչութեան ի գիտութիւն, որ Տ. Բարգէն վարդապետն առաջիկայ յունուարի 1-ից կարգուած է Արարատ ամսագրի պատասխանատու խմբագիր: 10 ղեկտեմբերի, թ. 2035:

Դիւանի գրութեամբ պատուիրուեց Օշականի գործակալին թոյլ տալ թաղել Օշականի ս. Մեսրոպ եկեղեցու գաւթում Օշականցի Հանգուցեալ Մարգար Աւագանի մարմինը՝ նախապէս ստանալով դպրոցի օգտին խոստացած 500 ռուբլին և եկեղեցու օգտին 100 ռուբլին: 10 ղեկտեմբերի, թ. 2039:

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին՝ մատենադարանում անկորուստ պահելու համար երեք հատ ձեռագրեր, որ ներկայացրել էր նորին Վեհափառութեան պ. Ս. Կանայեանը: 11 ղեկտեմբերի, թ. 2041:

Դիւանի գրութեամբ շնորհակալութիւն յայտնուեց պ. Բաղդասար Մահտեսի Մելքոնեան Անմեղիկեանցին՝ պ. Ս. Կանայեանցի ձեռքով ուղարկած երկու ձեռագիր մատեանների համար: 11 ղեկտեմբերի, թ. 2043:

Դիւանի գրութեամբ շնորհակալութիւն յայտնուեց Քիրսի Սարգիս քահ. Տէր-Փրիգորեանին՝ պ. Ս. Կանայեանցի միջոցով ուղարկած մի ձեռագիր Մաշտոցի համար: 11 ղեկտեմբերի, թ. 2044:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Երևանի Հայոց կոնսիստորիային կարգադրել հեռացնել Բիւրական գիւղից Վերին-Այլանը գիւղի վրայ ձեռնադրուած Թովմաս քահ. Տէր-Նիկողայոսեանին: 11 ղեկտեմբերի, թ. 2045:

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անուևով, որով ծանուցանելով, թէ, համաձայն միջնորդութեան Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքի և Ազգային Ժողովի, ամսոյս 24-ին, ս. Ստեփաննոս Նախավկայի տօնի օրը, Զմիւռնիայի Հայոց Թեմի առաջնորդ Տ. Մատթէոս Տ. վարդապետ Ինճէեանին ձեռնադրելու է եպիսկոպոս՝ առաջադրուեց կարգադրել Մայր Աթոռի միտրաններից մէկի ձեռքով Իջման ս. Սեղանի առաջ երզմնեցնել նորան Հայաստանեայց օ. եկեղեցու կանոնների և Տիտի համաձայն և երզմնագիրը ներկայացնել նորին Սրբութեան 20 դեկտեմբերի, թ. 2059:

Կոնդակ Գանձակի վիճակի նոր-Արմաւիր գիւղի Տիտական Հոգաբարձութեան անուևով, որով օրհնելով Հոգաբարձութեան և տեղի ամբողջ ժողովրդին, թոյլ տրուեց իրենց որոշման համաձայն, բանալ տեղական եկեղեցու գաւթում եկեղեցական-Տիտական դպրոց: 20 դեկտեմբերի, թ. 2072:

Նորին Սրբութեան մակազրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսին ուղարկել Երևանի կոնտիստորիայի միջոցով Հին-Նախիջևանի վիճակի աղքատ եկեղեցիներին եկեղեցական հին զգեստներ: 23 դեկտեմբերի, թ. 2081:

Կոնդակ Զմիւռնիայի Հայոց Թեմի առաջնորդ Տ. Մատթէոս նորապօսկ եպիսկոպոս Ինճէեանի անուևով՝ եպիսկոպոսական աստիճան տալու մասին: 24 դեկտեմբերի, թ. 2087:

Կոնդակ նորապօսկ Տ. Մատթէոս եպիսկոպոս Ինճէեանի անուևով, որով եպիսկոպոսական պանակէ կրելու իրաւունք շնորհուեց: 24 դեկտեմբերի, թ. 2088:

Կոնդակ Զմիւռնիայի Հայոց Թեմի քահանաների, գլխիներին, ընծայացուներին, գաւառական երեսփոխանական և կրօնական քաղաքական ժողովներին անդամներին, վաճառականներին, երեսփոխաններին, թաղական խորհրդի անդամներին, դպրոցների հոգաբարձութիւններին, ուսուցիչ-

ների, ջերմեռանդ և աշխատասէր արհեստաւարների, երկրագործների, համեստափայլ տիկիների, պարկեշտասուն օրիորդների, տղամարդկանց, կանանց, ծերերի, երիտասարդների և մանուկների և ամենայն մեծ ու փոքրների անունով՝ թեմի առաջնորդ Տ. Մատթէոս Տ. վարդապետ Ինճէեանին եպիսկոպոսական ստորճան տալու մասին. այլ և յորդորուեց, որ առաջնորդ նորապսակ Տ. Մատթէոս եպիսկոպոսին օգնութիւն և աջակցութիւն ցոյց տան, որ նորա գործունէութիւնը արդիւնաւէտ լինի յօգուտ ազգի և ի պայծառութիւն եկեղեցւոյ, 24 դեկտեմբերի, թ. 2089:

ՍԻՆՕԳԻ ՕՐԱԳԻՐԵՐԻՅ ՔԱՂԱՒԱՅՆԵՐ

2 դեկտմ., թ. 661. Սինօզր օրոշեց. պատուիրել Վրաստանի Հ. Կոնսիստորիային Կանձակում գտնւող Երուսաղէմապատկան 2 կրպակների տարեկան կապալաւորքը 47 ու 20 կոպ. ստանալ տեղի Հոգևոր Կառավարութեան միջոցով և ուղարկել Երուսաղէմի Հայոց պատրիարքին, իւրաքանչիւր անգամ այդ մասին տեղեկացնելով Սինօզին:

2 դեկտմ., թ. 662. Սինօզր՝ քննութեան առնելով Տաթևի Հ. Կառավարութեան քարտուղարի դէմ եղած բողոքների և վանքի կալուածական հաշիւների, վերաբերեալ գործը, որոշեց. հաստատել Սինօզի 1913 թ. նոյեմբ. 15-ի որոշումը, որով Հ. Կառավարութեան քարտուղար Պետրոս Տէր-Յարութիւնեանը հեռացուած է պաշտօնից և նրա տեղ կարգուած է նոյն Կառավարութեան ծառայող Տիգրան Սաղանդարեանը:

2 դեկտմ., թ. 669. Սինօզր՝ քննութեան առնելով Կարալագեազի գաւառի Աթուր գիւղի Մկրտիչ քհն. Ստեփանեանի և Ազար քհն. Տէր-Ազարեանի մեղադրական գործը՝ զինուորակոչ ատեանին կեղծ վկայական տալու մասին, որոշեց. կարճել այս գործը Սինօզում, ի նկատի ունենալով, որ զինուորական ատեանն արդէն այդ մասին յայտնել է նահանգական դատարանի դատախազին ի տնօրինութիւն: